ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 47-Ա

Արթիկ համայնք 13 օգոստոսի 2020թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի N 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2016թվականի նոյեմբերի 30-ի թիվ 54-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել նիստի հետևյալ օրակարգը

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու թիվ 36-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքային սեփականություն հանդիսացող Հակոբյան 32/6 հասցեում գտնվող գրասենյակային շինությունից 70,45 քմ. մակերեսով առանձնացվող տարածքը 2 տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրելու մասին:
3. Արթիկ համայնքի Շիրակացի փողոց 9/22, Շիրակացի փողոց 9/23 և Շիրակացի փողոց 9/24 հասցեներում համայնքի սեփականությունը հանդիսացող (1,24365 հա ընդհանուր մակերեսով) հողամասերը անհատույց (մշտական) օգտագործման տրամադրելու մասին:

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝

Կողմ՝ 8 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 8

Վարդանյան Ոսկան

Հակոբյան Տարոն

Ղուլիջողյան Ռաֆիկ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Աբրահամյան Ալեքսան

Նիկողոսյան Արմեն

Չոփիկյան Արտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ՝ Բ.ԱՎԱԳՅԱՆ

«13» օգոստոսի 2020 թվական
Արթիկ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 48-Ա

Արթիկ համայնք 13 օգոստոսի 2020թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 36-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասին 1-ն կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ,3-րդ մասերով, 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020թվականի հուլիսի 09-ի թիվ 36-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման վերևի մասում «36-Ն» -ի փոխարեն գրել «36-Ա»:

2) Որոշման վերնագիրը շարադրել հետևյալ կերպ՝ «Արթիկի արևային էլեկտրոկայան» փակ բաժնետիրական ընկերություն հիմնադրելու, կանոնադրական կապիտալը և կանոնադրությունը հաստատելու մասին:

3)Որոշման նախաբանից հանել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի հղումը

4) Ուժը կորցրած ճանաչել որոշման 1-ն կետը:

5) Որոշման 2-րդ կետում «ստեղծել» բառը փոխարինել «հիմնադրել» բառով:

6) Որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ կերպ. «Արթիկի Արևային էլեկտրոկայան» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի չափը սահմանել 100.000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որը կազմում է 10 (տասը) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 10.000 (տասը հազար)Հայաստանի Հանրապետության դրամ:Բոլոր 10 (տասը) բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից»:

1) <<Արթիկի արևային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի խորհրդի անդամներ ընտրել՝

ա. Արտակ Մանվելի Գրիգորյան - խորհրդի նախագահ

բ. Ռոբերտ Ռուբենի Իգիթյան- խորհրդի անդամ

գ. Տաթևիկ Թաթուլի Աղաքարյան - խորհրդի անդամ

դ. Ոսկան Հովհաննեսի Վարդանյան - խորհրդի անդամ

ե. Հարություն Հովհաննեսի Հակոբյան - խորհրդի անդամ

2) <<Արթիկի արևային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության վերստուգող հանձնաժողովի կազմում ընտրել 3 /երեք հոգի/՝

ա. Մարիամ Սեյրանի Փանոյան –հանձնաժողովի նախագահ

բ. Ռաֆիկ Գառնիկի Ղուլիջօղլյան- հանձնաժողովի անդամ

գ. Հովհաննես Գևորգի Կարախանյան- հանձնաժողովի անդամ

7) Ուժը կորցրած ճանաչել որոշման 5-րդ և 6-րդ կետերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝

Կողմ՝ 8 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 8

Վարդանյան Ոսկան		Հակոբյան Տարոն	
Ղուլիջօղլյան Ռաֆիկ		Մկրտչյան Մուշեղ	
Վարագյան Մեսրոպ		Աբրահամյան Ալեքսան	
Նիկողոսյան Արմեն		Չոփիկյան Արտակ	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ՝ Բ.ԱՎԱԳՅԱՆ

«13» օգոստոսի 2020 թվական
Արթիկ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 49-Ա

Արթիկ համայնք 13 օգոստոսի 2020թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱԿՈԲՅԱՆ 32/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԻՑ 70,45 ՔՄ. ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ ՏԱՐԱԾՔԸ 2 ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության՝ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, կառավարության 12 ապրիլի 2001 թվականի <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>> N 286 որոշմամբ և հիմք ընդունելով Արթիկի քաղաքային համայնքի քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերը, հաշվի առնելով, որ տարածքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականությունը հանդիսացող Հակոբյան փողոց թիվ 32/6 հասցեում գտնվող գրասենյակային շինությունից 70,45 քմ. մակերեսով առանձնացվող տարածքը /սեփականության վկայական 2540942 տրված 26 հոկտեմբերի 2011թվական/ 2 տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ <<Նոտարական տարածք>>-ին:

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝

Կողմ՝ 7 դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 7

Վարդանյան Ոսկան

Հակոբյան Տարոն

Ղուլիջողյան Ռաֆիկ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Չոփիկյան Արտակ

Նիկողոսյան Արմեն

Դեմ՝ 1

Աբրահամյան Ալեքսան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ՝ Բ.ԱՎԱԳՅԱՆ

«13» օգոստոսի 2020 թվական
Արթիկ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 50-Ա

Արթիկ համայնք 13 օգոստոսի 2020թվական

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՑԻ ՓՈՂՈՑ 9/22, ՇԻՐԱԿԱՑԻ ՓՈՂՈՑ 9/23 ԵՎ ՇԻՐԱԿԱՑԻ ՓՈՂՈՑ 9/24 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ (1,24365 ՀԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ) ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթիկ համայնքի սեփականության իրավունքի ճանաչումը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N16072020-08-0046 վկայական, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 16072020-08-0038 վկայական և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 10082020-08-0035 վկայական), Արթիկ համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն՝ 08-002-0001-0057, 08-002-0002-0002 և 08-002-0514-0002 կադաստրային ծածկագրերով 0,14631 հա, 1,03799 հա և 0,05935 հա (1,24365 հա ընդհանուր մակերեսով) հողամասերը անհատույց (մշտական) օգտագործման տրամադրել <<Արթիկի արևային էլեկտրոկայան>> փակ բաժնետիրական ընկերությանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության՝ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ի մասի 1-ին կետով, կառավարության 12 ապրիլի 2001թվականի <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>> N 286 որոշմամբ և հիմք ընդունելով Արթիկի քաղաքային համայնքի քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերը, հաշվի առնելով, որ տարածքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Տալ համաձայնություն 16 հուլիսի 2020 թվականի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Շիրակացի փողոց 9/22 հասցեում գտնվող 08-002-0001-0057 կադաստրային ծածկագրով /վկայական N 16072020-08-0046/ 0,14631 հա մակերեսով, 16 հուլիսի 2020 թվականի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Շիրակացի փողոց 9/23 հասցեում գտնվող 08-002-0002-0002 կադաստրային ծածկագրով /վկայական N 16072020-08-0038/ 1,03799 հա մակերեսով, 10 օգոստոսի 2020 թվականի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Շիրակացի փողոց 9/24 հասցեում գտնվող 08-002-0514-0002 կադաստրային ծածկագրով /վկայական N 10082020-08-0035/ 0,05935 հա

(1,24365 հա ընդհանուր մակերեսով) համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը Արթիկի <<Արևային էլեկտրոկայան>> փակ բաժնետիրական ընկերությանը անհատույց (մշտական) օգտագործման տրամադրելու առաջարկությանը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝

Կողմ՝ 8 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 8

Վարդանյան Ոսկան		Հակոբյան Տարոն	
Ղուլիջողյան Ռաֆիկ		Մկրտչյան Մուշեղ	
Վարագյան Մեսրոպ		Աբրահամյան Ալեքսան	
Նիկողոսյան Արմեն		Չոփիկյան Արտակ	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ՝ Բ.ԱՎԱԳՅԱՆ

«13» օգոստոսի 2020 թվական
Արթիկ համայնք